

ցազիր) ստանամ: Իր լաւ խորհուրդին համար շնորհակալ եղայ եւ խնդրեցի, որ ինք ինձ համար ձեռք բերէ: Ըսաւ, որ միասին երթալու ենք, որ կատարեցի: Եւ հազիւ փաշայէն խնդրած էի, ան արդէն շնորհեց՝ առանց որեւէ դիտողութեան կամ հարցումի իմ ճամբորդութեան նպատակի մասին: Երկուքին ալ շնորհակալ ըլլալէ վերջ իրենց քաղաքավարութեան համար, գացի փնտոելու իմ հայերս, որոնք յաջորդ առաւօտ մեկնիլ կը պատրաստուէին: Որով՝ ամսոյն (Ապրիլ, 1703) 11-ին ձի հեծանք եւ ակնահաճոյ ու պողոտատ երկրի հանդիպելով՝ առանց արտակարգ պատահարի մը ենթարկուելու՝ ամսոյն 17-ին Սինոպ հասանք: Անցանք քանի մը գիւղերէ, ձիթաստաններէ եւ կնձիներու փաթաթուած որթաստաններէ, նման Տուսկանիոյ»23):

Ուղեգիրը Սինոպի մէջ հայերէն կը բաժնուի եւ Կ. Պոլիս կ'անցնի: Անկիւրիոյ վանքին այս արքեպիսկոպոսին ինքնութիւնը ինձ կը մնայ անձանօթ:

Պօսելով Օսմանեան Կայսրութեան «ռայա»ներու մասին, ուղեգիրը կ'ըսէ.

«Նուաճեալ հպատակները ռայա կը կոչուին, այսինքն՝ հարկատու, օրինակ՝ ինչպէս յոյները, հայերը եւ վրացիները: Անոնք ունին բոլոր այն ազատութիւնները, որ կը վայելէին իրենց նախկին իշխաններուն ենթակայութեան ժամանակ, միայն տարեկան կը վճարեն շատ չափաւոր տուրք մը Նորին Բարձրութեան (Սուլթանին), որուն գլխաւոր եկամուտը կը կազմէ ասիկա մաքսատուրքերուն հետ, ինչպէս նաեւ ինչքերը այն հպատակներուն, զոր շնորհադուրկ կ'ընէ կամ կը մահացնէ: Խարաբը, կամ ռայաներուն տարեկան հարկը, կը բաղկանայ լոկ երկու, երեք, չորս կամ հինգ գրաուլէ իւրաքանչիւր գլխու, որ նոյնը կը մնայ պատերազմի թէ խաղաղութեան ժամանակ: Ամենահարուստները միայն տասը գրա-

ուս կը վճարեն: Եթէ անոնցմէ (ռայաներէն) որեւէ մէկը թրքանայ (որ ամենաշատը յոյներուն մէջ կը պատահի), ան ազատ է (հարկէն) բնիկի մը (թուրքի մը) նման: Գալով իրենց կիներուն՝ Դուռը անոնցմէ գլխահարկ չի վերցնէր, եւ ոչ ալ անոնց աղջիկներէն, որքան ալ որ հարուստ ըլլան: Սակայն, մանչերը պէտք է անմիջապէս սկսին վճարել, երբ տասներեք կամ տասնչորս տարու ըլլան»24):

1703 Յուլիս «19-ին անհաւատարիմ կուսակցութեան Վէզիրէն հրաման եկաւ յոյն պատրիարքին, որ մայր եկեղեցիին մէջ ծանուցանէ, ինչպէս նաեւ միւս յունադաւան եկեղեցիներուն մէջ, թէ որեւէ ռայա կամ յոյն (Օսմանեան) հպատակ, որ զէնք ունի եւ եւ իրեն (պատրիարքին) կը բերէ, զէնքին արժողութեան համաձայն պիտի վճարուի: Դարձեալ նոյն օրը զէնքի հաւաքման մասին իրենց եկեղեցիէն յայտարարեցին հայ քահանաներն ալ, որոնք իրենց Աւետիք պատրիարքէն զըրկըւած էին նոր կաթողիկներուն պատճառաւ եւ որոնք զայն (Աւետիքը) բանտարկել տուին Մուֆթիին կողմնակից ամբաստանելով եւ լուր տարածելով, որ Մուֆթիէն անոր (Աւետիքի) վստահուած էր դրամէն մաս մը»25):

Օրմանեան կը տարբերի մեր ուղեգիրէն Մուֆթիին անկման, վախճանին, ինչպէս նաեւ անոր պաշտպան Աւետիքի բանտարկութեան մասին: Մօթըրէյ կը վկայէ, որ Մուֆթի Ֆէյզուլահ էֆէնտի իր փախուստի միջոցին կը ձերբակալուի, Ա. Պոլիս կը բերուի պաշտօնազուրկ հրոչակուելով, հուսկ էջամբարձ, երեսը դէպի ազին անարգանքի համար, հրեայի մը իշապանութեամբ: Աղբիւսնոպոլսոյ Պիթպազարէն անցուցած ատենին կը հանդիպին «երկու հայ կամ յոյն քահանաներու, որոնք թաղումէ մը կը վերազանային՝ իրենց ձեռքը ունենալով զեռ իրենց խըն-

24) Անդ՝ էջ 231-2:

25) Անդ՝ էջ 240:

23) Անդ՝ էջ 228-9: